

ԿԾԿ ԾԻԳ-ի հիմնական նպատակը ՀՀ կրթության ոլորտում որակի, համապատասխանության, հասանելիության և արդյունավետության բարելավման ուղղված բարեփոխումային ծրագրերի իրականացումն է:

Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում

*Բաղադրիչ 1.1. Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում*

## 1. Ներածություն

Հայաստանի Հանրապետության անկախությանը հաջորդած տարիներին տնտեսության մեջ կատարված փոփոխությունները բացասական ներգործություն ունեցան կրթության համակարգի վրա, սակայն ամենամեծ հարվածը կրեց նախադպրոցական կրթությունը:

1996թ. ՀՀ վարչատարածքային կառավարման նոր համակարգի ձևավորման արդյունքում, ՀՀ տեղական ինքնակառավարման մասին օրենքի համաձայն, նախադպրոցական հաստատություններն անցան համայնքային ենթակայության: Համայնքներին նախադպրոցական հաստատությունները հանձնելուց հետո, նախադպրոցական հաստատությունների ցանցը կրեց զգալի փոփոխություններ. խիստ նվազեց գործող մանկապարտեզների թիվը և դրանց ֆինանսավորումը: Պետական ֆինանսավորումից զրկվելով նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանները, ուսումնանյութական բազան, գույքային և տեխնիկական հագեցվածությունը մտահոգիչ են: Համայնքների շուրջ 47%-ում չկան մանկապարտեզների համապատասխան շենքեր: Շուրջ 170 համայնքներում էլ կան շենքեր, սակայն դրանք չեն գործում:

Ներկայումս նախադպրոցական կրթության ոլորտում առկա հիմնախնդիրները հետևյալն են.

- երեխաների (այդ թվում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների) ընդգրկվածության ցածր մակարդակը հատկապես գյուղական բնակավայրերում,
- նախադպրոցական հաստատությունների անբավարար ցանցը, մատուցվող ծառայությունների ցածր որակը և դրանց անմատչելիությունը սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար,
- նախադպրոցական կրթության ուսումնական ծրագրերի և երեխաների հետ աշխատելու մեթոդների միօրինակությունը, հնացածությունը, երեխայակենտրոն մոտեցումների ներդրման խիստ անբավարարությունը,
- նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային վատ պայմանները, ուսումնանյութական բազայի բարոյական և ֆիզիկական մաշվածությունը,
- ֆինանսավորման անբավարարությունը, համայնքային բյուջեների սահմանափակ հնարավորությունները,

- նախադպրոցական կրթության կազմակերպման այլընտրանքային և ցածրարժեք ծառայությունների անբավարարությունը և այլն:

Կարևորելով նախադպրոցական կրթության ոլորտի հիմնախնդիրները և համակարգում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը, ՀՀ կառավարությունը 2008 թվականի մարտի 13-ի նիստի N 10 արձանագրային որոշմամբ հաստատել է Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թավականների ռազմավարական և փորձնական ծրագրերը:

Ռազմավարական դրույթների համաձայն, նախադպրոցական կրթության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության հիմնական նպատակը նախադպրոցական կրթության ծառայությունների որակի և մատչելիության բարելավումն է, որի նպատակով պետությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ նախադպրոցական տարիքի երեխաների կրթության մատչելիության ապահովման համար: Ռազմավարական ծրագրի շրջանակներում առանձնակի կարևորվում է նախադպրոցական ավագ տարիքային խմբի՝ հինգից վեց տարեկան երեխաների տարրական կրթությանն արդյունավետ նախապատրաստելու հիմնախնդիրը: Վերջինս առանձնակի կարևորվում է 12-ամյա միջնակարգ ընդհանուր կրթության անցման հետ՝ կապված 6-6.5 տարեկաններին տարրական դպրոցին նախապատրաստվելուն: Ծրագրային ժամանակահատվածի վերջում (2016թ.) նախատեսվում է 5-6 տարեկանների համար նախադպրոցական կրթությունը դարձնել համընդհանուր՝ ապահովելով ընդգրկվածության աստիճանական աճ (այդ տարիքային խմբի երեխաների ընդգրկվածությունը հասցնելով շուրջ 90 տոկոսի):

Համակարգի մատչելիության բարձրացումը և երեխաների ընդգրկվածության մեծացումը նախատեսվում է իրականացնել ինչպես գործող նախադպրոցական հաստատությունների ծանրաբեռնվածության մեծացման հաշվին, այնպես էլ այլընտրանքային և քիչ ծախսատար կրթական ծառայությունների ներդրման միջոցով:

Ծախսախնայող մոդելների էությունը կայանում է նրանում, որ դրանում հիմնականում ընդգրկվում են հաջորդ ուսումնական տարում առաջին դասարան գնացող 5-ից մինչև 6 տարեկան երեխաները, կկազմակերպվեն 3.5-4 ժամ տևողությամբ նախադպրոցական կրթական ծրագրերով ծառայություններ (առանց տաք սննդի և քնելու կազմակերպման), ինչի արդյունքում ծախսերը սովորական նախադպրոցական հաստատության ծախսերի համեմատ կկրճատվեն կիսով չափ: Այն համայնքներում, որտեղ չկան կամ չեն գործում նախադպրոցական հաստատություններ, նախատեսվում է բացել 1-ամյա նախադպրոցական դասարաններ՝ հիմնականում հանրակրթական դպրոցներում: Կստեղծվեն համապատասխան պայմաններ երեխայի ազատ և դինամիկ շարունակական զարգացմանը, մտավոր, ֆիզիկական և ստեղծագործական կարողությունների լիարժեք դրսևորմանը: Արդյունքում՝ ծրագրում ընդգրկված երեխաները կզարգացնեն իրենց ինքնուրույն ստեղծագործական կարողությունները, ձեռք կբերեն համագործակցելու և թիմով աշխատելու հմտություններ, կկարողանան կազմակերպել իրենց առօրյան և նաև պատրաստ կլինեն դպրոցին:

Ռազմավարական ծրագրի փորձնական փուլն իրականացվել է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանում և Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանում 2009 թվականին: Ծրագրի շրջանակներում իրականացվել են շուրջ 22 նախադպրոցական կրթության ծառայություններ՝ 20 դպրոցներում և 2 նախադպրոցական հաստատություններում: Դրանցում ընդգրվել են նախադպրոցական ավագ տարիքային խմբի շուրջ 530 երեխա: Կրթության որակ և համապատասխանություն՝ երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում Արագածոտնի մարզի 19 և Արարատի մարզի 22 համայնքների հաստատություններում: Հաստատությունների համապատասխան տարածքները բարեկարգվել են, համալրվել են գույքով և սարքավորումներով: Այդ

Հաստատությունները համալրվել են գույքով և սարքավորումներով: Արարատի և Արագածոտնի 41 հաստատություններում սկսվել են ուսումնական պարապմունքները:

Նախադպրոցական կրթության միկրոծրագրերի իրականացման արդյունավետությունը բարձրացնելու, մշտական վերահսկողություն ապահովելու, ծագած խնդիրները ժամանակին լուծելու նպատակով մարզերի տեղական խորհրդատուները կկոորդինացնեն միկրոծրագրերի իրականացման աշխատանքները:

Հաշվի առնելով նախադպրոցական կրթության կարևորությունը և նշանակությունը երեխայի համակողմանի զարգացման, դաստիարակության, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցերում, անհրաժեշտ է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնել նաև հանրապետության մյուս համայնքներում: 2011-2012 թթ.-ին միկրոծրագրերը կիրականացվեն Գեղարքունիքի, Արմավիրի, և Վայոց Ձոր մարզերում, 2012-2013թթ.-ին՝ Տավուշի, Շիրակի և Լոռու մարզերում, 2013-2014թթ.-ին՝ Կոտայքի մարզում և Երևանում:

## **2. Բաղադրիչի նպատակներն են.**

- երեխաներին նախապատրաստել տարրական դպրոցին՝ ապահովելով հավասար մեկնարկային հնարավորություններ,
- մեծացնել նախադպրոցական կրթության ծրագրերում երեխաների ընդգրկվածությունը՝ ներառելով սոցիալապես ընտանիքների երեխաներին:

## **3. Բաղադրիչի խնդիրներն են.**

- նպաստել և աջակցել երեխաների նախադպրոցական կրթության իրականացման նոր՝ ցածրարժեք ծառայությունների ներդրմանը, որոնք մատչելի կլինեն բնակչության առավել անապահով խավերին, ինչպես նաև կնպաստեն գործող հաստատություններում երեխաների ընդգրկման աճին,
- աջակցել դպրոցին նախապատրաստմանն ու երեխաների ընդհանուր զարգացմանն ուղղված նախադպրոցական երեխայակենտրոն կրթական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,

- բարելավել համայնքների կարողությունները և խթանել նրանց նախաձեռնությունները՝ ուղղված նախադպրոցական կրթական մատչելի ծառայությունների մատուցմանը,
- գործարկել ցածր արժողությամբ նախադպրոցական կրթության ծրագրեր նախադպրոցական հաստատություններ չունեցող համայնքներում՝ դպրոցների կամ համայնքահեն այլ հաստատությունների հիմքի վրա,
- վերապատրաստել նախադպրոցական կրթության ծրագրեր իրականացնող հաստատությունների մանկավարժներին և դաստիարակներին:

#### 4. Բաղադրիչի շրջանակներում իրականացվող հիմնական գործողություններն են.

- ԿԳ նախարարության, մարզպետարանների, համայնքների և հաստատությունների համագործակցությամբ ուսումնասիրվել և որոշվել են պոտենցիալ/թիրախային տարածաշրջանները,
- Թիրախային տարածաշրջանների համայնքներում ուսումնական հաստատությունների տնօրենների, համայնքի անդամների, ծնողների, ԿԳ նախարարության, մարզային կրթության վարչությունների և ԿՕԿ ԾԻԳ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ վարկային ծրագրի առաջին չորս տարիների յուրաքանչյուրի եռամսյակում կիրականացվեն խթանման աշխատանքներ՝ ուղղված նախադպրոցական կրթության բարեփոխումներին, նախադպրոցական կրթության այլընտրանքային և դրամաշնորհ ստանալու հնարավորություններին ցածրարժեք ծառայությունների կազմակերպման նպատակով, դրամաշնորհային ծրագրերի իրականացման մրցույթի պայմանների ներկայացմանը և այլ մասին:
- Վարկային ծրագրի առաջին չորս տարիների յուրաքանչյուրի երկրորդ եռամսյակում հետաքրքրված և համապատասխան հայտ ներկայացրած հաստատությունների շրջանում կիրականացվի մրցույթ և մոտ 200 հաստատություններին կտրամադրվեն դրամաշնորհներ: Դրամաշնորհային միջոցները կարող են օգտագործվել ծրագրեր իրականացնող հաստատություններում հետևյալ նպատակներով.
  - համապատասխան ֆիզիկական պայմանների բարելավում,
  - անհրաժեշտ կահույքով և այլ գույքով համալրում,
  - որոշ կոմունալ և աշխատավարձային ծախսերի փոխհատուցում,
  - և այլն:
- Կիրականացվեն նախադպրոցական ծրագրեր իրականացնող հաստատությունների տնօրենների, մանկավարժական կադրերի, ինչպես նաև համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների վերապատրաստում: Մ.թ. օգոստոսին ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի աջակցությամբ <<Քայլ առ քայլ>> կազմակերպությունն իրականացրել է վերոնշյալ 41 հաստատությունների դաստիարակների վերապատրաստման 1-ին փուլը:
- Ծրագրի ամբողջ ընթացքում կիրականացվի նախադպրոցական ծրագրերի վերահսկում և գնահատում:
- Միկրոծրագրերի իրականացման արդյունավետությունը բարձրացնելու, դրանցում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկան բացահայտելու,

ուսումնական ծրագրերի, ուսումնառության պայմանների համապատասխանությունը բացահայտելու նպատակով կկազմակերպվի մշտադիտարկում և կիրականացվի հետազոտություն մրցութային կարգով ընտրված կազմակերպության միջոցով /յուրաքանչյուր տարի՝ ըստ մարզերի և միկրոծրագրերի աշխատանքներին զուգահեռ/:

- հաստատությունների կողմից միկրոծրագրերի իրականացման ընթացքում դրանց կտրամադրվի տեխնիկական օժանդակություն
- Ըստ անհրաժեշտության, կվերանայվեն Դպրոցին նախապատրաստմանն ու երեխաների ընդհանուր զարգացմանն ուղղված նախադպրոցական կրթության չափորոշիչներն ու ծրագրերը և դրանք կտրամադրվեն հաստատություններին:

Հաստատություններին դրամաշնորհներ տրամադրելու ընթացակարգերը մանրամասն նկարագրված է **Դրամաշնորհներ հաստատություններին նախադպրոցական կրթության միկրոծրագրեր իրականացման համար՝ Ղեկավար Ձեռնարկում, որը հաստատված է ԿԳ Նախարարի 02.04.2010 N 151-ՍՔ հրամանով և հավանության է արժանացած Համաշխարհային Բանկի կողմից:**

**Սպասվելիք արդյունքները**

Արդյունքը	Ժամկետը
Մոտ 200 նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացնող նոր հաստատություններ	Մինչև 2014 թ
Մոտ վերապատրաստված 520 մանկավարժ, 200 հաստատության տնօրեն և 200 համայնքի ու մարզպետարանի ներկայացուցիչ	2010-2014 թթ
Նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական համալիր	2010 թ
Նախադպրոցական կրթության ընդգրկվածության աճ	Մինչև 2014 թ